

Եվրոպական միությունում էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում ներդրումային ծրագրերի մասին Հանձնաժողովին ծանուցելու մասին և 736/96 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչող՝ Խորհրդի 2010 հունիսի 24-ի թիվ 617/2010 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգ

Պաշտոնական տեղեկագիր L 180 , 15/07/2010թ., էջ 0007 - 0014

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը, և, մասնավորապես, դրա 337-րդ հոդվածը,

հաշվի առնելով «Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 187-րդ հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը,

Քանի որ

1) Միությունում էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում կատարվող ներդրումների ամբողջական պատկերի ձեռքբերումը կարևոր է, որպեսզի Հանձնաժողովը կարողանա իր գործառույթներն իրականացնել էներգիայի ոլորտում: Կանոնավոր և թարմացված տվյալների և տեղեկությունների մատչելիությունը հնարավորություն կտա Հանձնաժողովին կատարել անհրաժեշտ համեմատությունները, գնահատումները կամ առաջարկել համապատասխան միջոցներ՝ հիմնված համապատասխան թվերի և վերլուծության վրա, մասնավորապես, էներգիային հետագա մատակարարման և պահանջարկի հավասարակշռության վերաբերյալ,

2) վերջին տարիների ընթացքում էներգետիկ միջավայրը զգալիորեն փոխվել է Միության ներսում և դրա սահմանների դուրս. էներգետիկ ենթակառուցվածքի ոլորտում ներդրումները դարձել են առանցքային խնդիր Միության էներգամատակարարումն ապահովելու, ներքին շուկայի գործունեության և Միության կողմից արդեն սկսված՝ ածխաթթու գազի ցածր արտանետումներով էներգետիկ համակարգերին անցնելու համար,

3) նոր էներգետիկ համատեքստով պահանջվում է բոլոր էներգետիկ ոլորտների բոլոր տեսակի ենթակառուցվածքներում կատարել էական ներդրումներ, ինչպես նաև մշակել

ենթակառուցվածքի նոր տեսակներ և շուկայում կիրառվող նոր տեխնոլոգիաներ: Էներգետիկ ոլորտի ազատականացումն ու ներքին շուկայի հետագա ինտեգրումը ավելի մեծ դեր են հատկացնում ներդրումների մասով տնտեսվարող սուբյեկտներին: Միևնույն ժամանակ քաղաքականության նոր պահանջները, ինչպիսիք են վառելիքի կազմի վրա ազդող սահմանաչափերը կփոփոխեն անդամ պետությունների՝ նոր և (կամ) արդիականացված էներգետիկ ենթակառուցվածքներին ուղղված քաղաքականությունը,

4) այս համատեքստում մեծ ուշադրություն պետք է դարձնել Միությունում էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում կատարվող ներդրումներին, մասնավորապես, որոշ խնդիրներ կանխարգելելու, լավագույն փորձին նպաստելու և Միության էներգետիկ համակարգի հետագա զարգացման թափանցիկությունն ապահովելու նպատակով,

5) ուստի, Հանձնաժողովը և, մասնավորապես, դրա՝ էներգետիկայի գծով շուկայի ուսումնասիրության բաժինը պետք է իրենց տրամադրության տակ ունենան ճշգրիտ տվյալներ ու տեղեկություններ ներդրումային ծրագրերի, այդ թվում՝ Միության էներգետիկ համակարգի ամենակարևոր բաղադրիչների շահագործման դադարեցման վերաբերյալ,

6) արտադրական, փոխադրման և պահեստավորման հնարավորություններն ու նախագծերը էներգետիկայի տարբեր ոլորտներում մեծ նշանակություն ունեն Միության համար և կարևոր են հետագա ներդրումների համար: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որ Հանձնաժողովին ծանուցեն ներդրումային ծրագրերի մասին, որոնց հիման վրա արդեն սկսվել են շինարարական կամ շահագործման դադարեցման աշխատանքներ, կամ որոնց շուրջ ընդունվել է ներդրումների մասին վերջնական որոշում,

7) Եվրատոմ պայմանագրի 41-րդ և 42-րդ հոդվածների համաձայն՝ ձեռնարկությունները պարտավորություն են կրում ծանուցել իրենց ներդրումային ծրագրերի մասին: Անհրաժեշտ է այդ տեղեկատվությունը լրացնել, մասնավորապես, ներդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ պարբերաբար ներկայացվող հաշվետվություններով: Այդպիսի լրացուցիչ հաշվետվությունները չեն հակասում Եվրատոմ պայմանագրի 41 – 44 –րդ հոդվածներին,

8) որպեսզի Հանձնաժողովը հաստատուն և ամբողջական կարծիք կազմի Միության էներգետիկ համակարգի հետագա զարգացումների վերաբերյալ, անհրաժեշտ է, որ անդամ պետությունները փոխանցեն ներդրումային ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունների ներդաշնակեցված շրջանակ՝ հիմնված պաշտոնական տվյալների ու տեղեկությունների թարմացված կատեգորիաների վրա,

9) այդ նպատակով անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ծանուցեն էներգետիկ ենթակառուցվածքի ոլորտում նավթի, բնական գազի, էլեկտրականության, այդ թվում՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրականության, բիովառելիքների արտադրության, պահեստավորման և փոխանցման ու ածխաթթու գազի որսման մասին իրենց տարածքի, ինչպես նաև երրորդ երկրների հետ ներդրումային ծրագրերի մասին, որոնք գտնվում են նախագծման կամ շինարարության փուլում Համապատասխան ձեռնարկությունները պետք է պարտավորություն կրեն տվյալ տվյալների ու տեղեկությունների մասին անդամ պետություններին ծանուցելու համար,

10) էներգիայի ոլորտում ներդրումային ծրագրերին տրված ժամանակահատվածը և երկու տարին մեկ ներկայացվող հաշվետվությունները պետք է բավարար լինեն,

11) վարչական բեռան անհամաչափ բաշխումից խուսափելու և անդամ պետությունների ու ձեռնարկությունների, մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկությունների համար ծախսերը նվազեցնելու նպատակով սույն Կանոնակարգով պետք է հնարավորություն տրվի անդամ պետություններին ու ձեռնարկություններին ազատել հաշվետվություն ներկայացնելու պարտավորություններից՝ պայմանով, որ Հանձնաժողովին ներկայացվեն համարժեք տեղեկություններ՝ համաձայն Միության հաստատությունների կողմից ընդունված՝ էներգիային ոլորտին վերաբերող հատուկ իրավական ակտերի, որոնք ուղղված են Միությունում մրցունակ էներգետիկ շուկաների, Միության էներգետիկ համակարգերի կայունության և Միությանը էներգամատակարարման անվտանգության նպատակների իրականացմանը: Ուստի, պետք է խուսափել էլեկտրականության և բնական գազի համար նախատեսված՝ ներքին շուկայի երրորդ փաթեթով սահմանված հաշվետվություն ներկայացնելու պահանջների ցանկացած կրկնօրինակումից,

12) այդ իսկ նպատակով տվյալներ մշակելու, ինչպես նաև տվյալների մասին ապահով եղանակով ծանուցելու համար Հանձնաժողովը և, մասնավորապես, դրա՝ էներգետիկայի գծով շուկայի ուսումնասիրության բաժինը պետք է հնարավորություն ունենան ձեռնարկելու բոլոր համապատասխան միջոցները, մասնավորապես, SS ինտեգրված գործիքների ու ընթացակարգերի գործունեությունը,

13) անդամ պետությունների կողմից անձնական տվյալների մշակման մասով անձանց պաշտպանությունը կարգավորվում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 95/46/ԵՀ հրահանգով [1], մինչդեռ Հանձնաժողովի կողմից անձնական տվյալների մշակման մասով

անձանց պաշտպանությունը կարգավորվում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 45/2001 կանոնակարգով (ԵՀ): Սույն Կանոնակարգը չի խաթարում այդ դրույթները,

14) անդամ պետությունները կամ դրանց պատվիրակված մարմինները և Հանձնաժողովը պետք է պահպանեն առևտրի տեսանկյունից գաղտնի տվյալների ու տեղեկությունների գաղտնիությունը: Ուստի, անդամ պետությունները կամ դրանց պատվիրակված մարմինները պետք է համախմբեն այդ տվյալներն ու տեղեկությունները՝ բացառությամբ միջսահմանային փոխադրումների նախագծերին վերաբերող տվյալների ու տեղեկությունների, մինչև դրանք Հանձնաժողովին ներկայացնելը: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը պետք է հետազայում այդ տվյալները համախմբի այնպիսի եղանակով, որ առանձին ձեռնարկություններին և կառուցվածքների վերաբերող ոչ մի մանրամասն տեղեկություն չբացահայտվի կամ չհրապարակվի,

15) Հանձնաժողովը և, մասնավորապես, դրա՝ էներգետիկայի գծով շուկայի ուսումնասիրության բաժինը պետք է նախատեսեն Միության էներգետիկ համակարգի կառուցվածքային զարգացման և հեռանկարների կանոնավոր և միջնորդային վերլուծություն, որտեղ, հարկ եղած դեպքում, շեշտը կդրվի այդ էներգետիկ համակարգի որոշ ասպեկտների վրա: Այդ վերլուծությունը պետք է նպաստի, մասնավորապես, հնարավոր ենթակառուցվածքների ու ներդրումների բացակայությունների բացահայտմանը՝ կապված էներգիայի մատակարարման ու պահանջարկի հավասարակշռության հետ: Վերլուծությունը պետք է նպաստի նաև էներգետիկ ենթակառուցվածքների քննարկմանը Միության մակարդակով, ուստի, այն պետք է ուղղված լինի Եվրոպական պառլամենտին, Խորհրդին և Տնտեսական ու սոցիալական հարցերով Եվրոպական հանձնաժողովին և հասանելի լինի երրորդ կողմերին,

16) Հանձնաժողովին կարող են օժանդակել անդամ պետությունների փորձագետները կամ ցանկացած այլ իրավասու փորձագետներ ենթակառուցվածքում հավանական բացթողումների և դրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ համընդհանուր պատկերացում կազմելու ու հետագա զարգացումների թափանցիկությունն ապահովելու նպատակով,

17) հիմք ընդունելով «Նավթի, բնական գազի և էլեկտրականության ոլորտներում Համայնքի շահերից բխող ներդրումային ծրագրերի մասին Հանձնաժողովին ծանուցելու մասին» Խորհրդի 1996 թվականի ապրիլի 22-ի թիվ 736/96 կանոնակարգը (ԵՀ) [4] կիրառող՝ Հանձնաժողովի թիվ 2386/96 կանոնակարգի (ԵՀ) [3] համաձայն օգտագործվող ծանուցման

ձևաչափը և ազգային փորձագետների հետ խորհրդակցելուց հետո՝ Հանձնաժողովը պետք է ընդունի սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները,

18) հաշվի առնելով էներգիայի այսօրվա մարտահրավերներին այն հարմարեցնելու համար անհրաժեշտ փոփոխություններն և պարզության համար՝ թիվ 736/96 կանոնակարգ (ԵՀ) պետք է ուժը կորցրած ճանաչվի և փոխարինվի նոր կանոնակարգով,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգով սահմանվում է ընդհանուր շրջանակ նավթի, բնական գազի, էլեկտրականության, այդ թվում՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրականության և բիովառելիքների ոլորտներում ներդրումային ծրագրերի և այդ ոլորտների կողմից արտադրվող ածխաթթու գազի ստացման ու պահեստավորման վերաբերյալ ներդրումային ծրագրերի մասին Հանձնաժողովին ծանուցելու համար:

2. Սույն Կանոնակարգը կիրառվում է հավելվածում նշված բոլոր տեսակի ներդրումային ծրագրերի նկատմամբ, որոնց հիման վրա արդեն սկսվել են շինարարական կամ գործունեության դադարեցման աշխատանքներ, կամ որոնց շուրջ ընդունվել է ներդրումների մասին վերջնական որոշում:

Անդամ պետությունները կարող են նաև ներկայացնել ցանկացած հաշվարկված տվյալներ կամ նախնական տեղեկություններ հավելվածում նշված բոլոր տեսակի ներդրումային ծրագրերի նկատմամբ, որոնց հիման վրա պլանավորված է սկսել շինարարական աշխատանքներ հինգ տարվա ընթացքում և որոնց գործունեությունը պլանավորված է դադարեցնել երեք տարիների ընթացքում, սակայն որոնց շուրջ ընդունվել է ներդրումների մասին վերջնական որոշում:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները.

1. ենթակառուցվածք՝ արտադրության, փոխադրումների և պահեստավորման հետ կապ ունեցող կառուցվածքի ցանկացած տեսակ կամ կառուցվածքի մաս.

2. ներդրումային ծրագրեր՝ ծրագրեր՝ ուղղված.

i) նոր ենթակառուցվածքների ստեղծմանը.

ii) առկա ենթակառուցվածքների հնարավորությունների փոփոխելուն, արդիականացնելուն, ավելացնելուն կամ նվազեցնելուն.

iii) առկա ենթակառուցվածքների շահագործման մասնակի կամ լրիվ դադարեցմանը.

3. ներդրումների մասին վերջնական որոշում՝ որոշում, որն ընդունվել է ձեռնարկության մակարդակով ծրագրի հիման վրա ներդրում կատարելու փուլի համար հստակորեն սահմանված գումարներ հատկացնելու մասին. ներդրում կատարելու փուլ՝ փուլ, որի ընթացքում սկսվում է շինարարություն կամ շահագործման դադարեցում և կատարվում են կապիտալ ծախսեր: Ներդրում կատարելու փուլը չի ընդգրկում պլանավորման փուլը, որի ընթացքում նախապատրաստվում է ծրագրի իրականացումն, ու որը, անհրաժեշտության դեպքում, ներառում է կիրառելիության գնահատում, նախապատրաստական և տեխնիկական ուսումնասիրություններ, լիցենզիաների ու թույլտվությունների ստացում և կապիտալ ծախսերի կատարում.

4. շինարարության ընթացքում գտնվող ներդրումային ծրագրեր՝ ներդրումային ծրագրեր, որոնց հիման վրա արդեն սկսվել են շինարարական աշխատանքներ, և կատարվել են կապիտալ ծախսեր.

5. շահագործման դադարեցում՝ փուլ, որի ընթացքում ենթակառուցվածքի շահագործումը մշտապես դադարեցվում է.

6. արտադրություն՝ էլեկտրականության արտադրություն և վառելիքների, այդ թվում՝ բիովառելիքների մշակում.

7. փոխանցում՝ էներգիայի աղբյուրների կամ արտադրանքի կամ ածխաթթու գազի փոխանցում ցանցի միջոցով, մասնավորապես.

i) խողովակաշարերով՝ բացի վերև ուղղված խողովակաշարերի ցանցից և խողովակաշարերի այն հատվածից, որը հիմնականում օգտագործվում է տեղական բաշխման դեպքում. կամ

ii) չափազանց բարձր և բարձր լարման համակցված համակարգերի միջոցով՝ բացի այն համակարգերից, որոնք հիմնականում օգտագործվում է տեղական բաշխման դեպքում.

8. պահեստավորում՝ մշտական կամ ժամանակավոր հիմունքներով էներգիայի կամ էներգիայի աղբյուրների կուտակում վերգետնյա կամ ստորգետնյա ենթակառուցվածքում կամ երկրաբանական կայաններում կամ ածխաթթու գազի տեղայնացում ստորգետնյա երկրաբանական կառուցվածքներում.

9. ձեռնարկություն՝ ֆիզիկական կամ իրավաբանական, մասնավոր կամ պետական հատվածում գործող սուբյեկտ, որը որոշում է կայացնում ներդրումային ծրագրերի մասով կամ իրականացնում է դրանք.

10. էներգիայի աղբյուրներ՝

i) էներգիայի հիմնական աղբյուրներ, օր.՝ նավթ, բնական գազ կամ ածուխ.

ii) էներգիայի փոխակերպված աղբյուրներ, օր.՝ էլեկտրականություն.

iii) էներգիայի վերականգնվող աղբյուրներ, այդ թվում՝ հիդրոէլեկտրականություն, բիոգանգված, բիոգազ, քամու, արևային, մակընթացային, ալիքների և երկրաջերմային էներգիա. և

iv) էներգետիկ արտադրանքներ, օր.՝ զտված նավթամթերք և բիովառելիքներ.

11. հատուկ մարմին՝ մարմին, որին Միության՝ էներգիայի ոլորտին վերաբերող ցանկացած հատուկ իրավական ակտով վերապահվել է Միության ամբողջ տարածքում ցանցային զարգացման և ներդրումների այնպիսի բազմամյա նախագծերի մշակումն ու ընդունումը էներգետիկ ենթակառուցվածքների մասով, ինչպիսիք են «էլեկտրականության ոլորտում միջսահմանային փոխանակման ցանցի հասանելիության պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 714/2009 (ԵՀ) կանոնակարգի [5] 4-րդ հոդվածում նշված էլեկտրականության փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցը և «Բնական գազի փոխադրման ցանցի հասանելիության պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 715/2009 (ԵՀ) կանոնակարգի [6] 4-րդ հոդվածում նշված գազի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցը:

Հոդված 3

Ծանուցում տվյալների մասին

1. Տվյալների հավաքման և հաշվետվություն ներկայացնելու բեռը համաչափ պահելիս անդամ պետությունները կամ մարմինները, որոնց նրանք տալիս են այդ հանձնարարությունը, պետք է հավաքեն սույն Կանոնակարգում նշված բոլոր տվյալներն ու տեղեկությունները 2011 թվականի հունվարի 1-ից և այնուհետև յուրաքանչյուր երկու տարին մեկ:

Նրանք Հանձնաժողովին պետք է ծանուցեն սույն Կանոնակարգով սահմանված նախագծին/ծրագրին առնչվող տվյալների և համապատասխան տեղեկությունների մասին 2011 թվականին. այդ տարին պետք է դիտվի որպես հաշվետվություն ներկայացնելու առաջին տարի, իսկ այնուհետև հաշվետվություններ պետք է ներկայացվեն յուրաքանչյուր երկու տարին մեկ: Ծանուցումը պետք է արվի ամփոփ ձևով՝ բացառությամբ միջսահմանային փոխադրումների նախագծերին վերաբերող տվյալների ու տեղեկությունների:

Անդամ պետությունները կամ դրանց պատվիրակված մարմինները նախագծին վերաբերող ամփոփ տվյալների ու համապատասխան տեղեկությունների մասին պետք է ծանուցեն մինչև հաշվետվություն ներկայացնելու համապատասխան տարվա հուլիսի 31-ը:

2. Անդամ պետությունները կամ դրանց պատվիրակված մարմինները ազատվում են 1-ին պարբերությամբ սահմանված պարտականություններից՝ պայմանով, որ Միության՝ էներգիայի ոլորտին վերաբերող իրավունքի կամ Եվրատոմ պայմանագրի համաձայն՝

ա) համապատասխան անդամ պետությունը կամ դրա պատվիրակված մարմինն արդեն ծանուցել է Հանձնաժողովին սույն Կանոնակարգով սահմանված պայմանները բավարարող տվյալների ու տեղեկությունների մասին և նշել է ծանուցման օրն ու համապատասխան կոնկրետ իրավական ակտը. կամ

բ) հատուկ մարմին, ում վերապահվել է ներդրումների բազմամյա նախագծերի նախապատրաստումը էներգետիկ ենթակառուցվածքների մասով Միության մակարդակով և այդ նպատակով սույն Կանոնակարգով սահմանված պահանջները բավարարող տվյալների ու տեղեկությունների հավաքումը: Այս դեպքում և սույն Կանոնակարգի նպատակներով հատուկ մարմինը Հանձնաժողովին պետք է ծանուցի բոլոր համապատասխան տվյալների ու տեղեկությունների մասին:

Հոդված 4

Տվյալների աղբյուրները

Համապատասխան ձեռնարկությունները պետք է 3-րդ հոդվածում նշված տվյալների ու տեղեկությունների մասին ծանուցեն անդամ պետություններին կամ դրանց պատվիրակված մարմիններին, որոնց տարածքում նրանք պլանավորում են իրականացնել ներդրումային ծրագրերը, մինչև հաշվետվություն ներկայացնելու յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը: Ծանուցված տվյալներն ու տեղեկությունները պետք է արտացոլեն ներդրումային ծրագրերի ընթացիկ վիճակը հաշվետվություն ներկայացնելու համապատասխան տարվա մարտի 31-ի դրությամբ:

Առաջին պարբերությունը չպետք է կիրառվի այն ձեռնարկությունների նկատմամբ, որոնց դեպքում համապատասխան անդամ պետությունը որոշում է Հանձնաժողովին ներկայացնել 3-րդ հոդվածում նշված տվյալներն ու տեղեկություններն այլ եղանակով:

Հոդված 5

Ծանուցման բովանդակությունը

1. Հավելվածում նշված ներդրումային ծրագրերի տեսակների դեպքում 3-րդ հոդվածով նախատեսված ծանուցման մեջ պետք է, հարկ եղած դեպքում, նշվի.

ա) նախագծման փուլում կամ շինարարության ընթացքում գտնվող աշխատանքների քանակը.

բ) նախագծման փուլում կամ շինարարության ընթացքում գտնվող ենթակառուցվածքի կամ աշխատանքների տեսակն ու հիմնական առանձնահատկությունները, այդ թվում՝ հարկ եղած դեպքում, միջսահմանային փոխադրումների նախագծերի իրականացման վայրը.

գ) շահագործման հնարավոր տարին.

դ) օգտագործվող էներգիայի աղբյուրը.

ե) մատակարարման ճգնաժամային իրավիճակի ապահովությանն արձագանքելու հնարավորություն ունեցող սարքավորումները, օր.՝ վառելիքի մատակարարումն ընդհատող կամ հակառակ հոսքի հնարավորություն ունեցող սարքավորումները. և

զ) ածխաթթու գազի որսման սարքավորումները կամ ածխաթթու գազի որսման և կուտակման տեխնիկական մեխանիզմները:

2. Առաջարկվող ցանկացած աշխատանքի դադարեցման դեպքում 3-րդ հոդվածով նախատեսված ծանուցման մեջ պետք է նշվի.

ա) համապատասխան ենթակառուցվածքի տեսակն ու հնարավորությունները. և

բ) շահագործման դադարեցման հնարավոր տարին.

3. 3-րդ հոդվածի համաձայն արվող ցանկացած ծանուցում պետք է, հարկ եղած դեպքում, ներառի նախագծային արտադրանքի փոխադրման և պահեստավորման հնարավորությունների ընդհանուր ծավալը, որը առկա է հաշվետվություն ներկայացնելու համապատասխան տարվա սկզբին կամ որի շահագործումն ընդհատվել է ավելի քան երեք տարով:

Անդամ պետությունները, դրանց պատվիրակված մարմինները կամ 3(2)(բ) հոդվածում նշված հատուկ մարմինը կարող են իրենց ծանուցումներին ավելացնել համապատասխան դիտողություններ, օր.¹ դիտողություններ ներդրումային ծրագրերի իրականացման ուշացումների կամ խոչընդոտների վերաբերյալ:

Հոդված 6

Տվյալների որակն ու հրապարակայնությունը

1. Անդամ պետությունները, դրանց պատվիրակված մարմինները կամ, հարկ եղած դեպքում, հատուկ մարմինները պետք է նպատակ ունենան ապահովել Հանձնաժողովին իրենց կողմից ծանուցվող տվյալների ու տեղեկությունների որակը, համապատասխանությունը, ճշգրտությունը, պարզությունը, ժամանակին լինելն ու հետևողականությունը:

Հատուկ մարմինների դեպքում ծանուցված տվյալներին ու տեղեկություններին կարող են կցվել անդամ պետությունների կողմից արվող համապատասխան դիտողություններ:

2. Հանձնաժողովը կարող է հրապարակել սույն Կանոնակարգի համաձայն ուղարկված տվյալներն ու տեղեկությունները, մասնավորապես 10(3) հոդվածում նշված վերլուծությունները՝ պայմանով, որ տվյալներն ու տեղեկությունները հրապարակվեն ամփոփ ձևով և որ առանձին ձեռնարկություններին ու կառուցվածքներին վերաբերող ոչ մի մանրամասն տեղեկություն չբացահայտվի կամ չհրապարակվի:

3. Անդամ պետությունները, Հանձնաժողովը կամ դրանց պատվիրակված մարմինները պետք է պահեն իրենց տիրապետության տակն գտնվող՝ առևտրի տեսանկյունից գաղտնի տվյալների կամ տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 7

Կիրարկող դրույթները

Սույն Կանոնակարգով սահմանված սահմաններում Հանձնաժողովը պետք է մինչև 2010 թվականի հոկտեմբերի 31-ը ընդունի սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ դրույթները, որոնք վերաբերում են 3-րդ և 5-րդ հոդվածներում նշված տվյալների ու տեղեկությունների ծանուցման ձևին և տեխնիկական այլ մանրամասներին:

Հոդված 8

Տվյալների մշակումը

Հանձնաժողովը պատասխանատու է սույն Կանոնակարգի համաձայն իրեն ծանուցվող էներգետիկ ենթակառուցվածքներին վերաբերող տվյալների կամ տեղեկությունների ստացման, կուտակման ու մշակման համար անհրաժեշտ ՏՏ ռեսուրսների զարգացման, տրամադրման, կառավարման և պահպանման համար:

Հոդված 9

Անձանց պաշտպանություն տվյալների մշակման մասով

Սույն Կանոնակարգը չի հակասում Միության իրավունքին և, մասնավորապես, չի փոփոխում 95/46/ԵՀ հրահանգով սահմանված՝ անդամ պետությունների պարտավորությունները անձնական տվյալների մշակման մասով կամ թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգով Միության հաստատությունների ու մարմինների վրա դրված պարտավորությունները իրենց պարտականությունները կատարելիս անձնական տվյալների մշակման մասով:

Մոնիտորինգը և հաշվետվություններ ներկայացնելը

1. Ուղարկված տվյալների ու տեղեկությունների և, հարկ եղած դեպքում, տվյալների այլ աղբյուրների, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից տրամադրված տվյալների հիման վրա և հաշվի առնելով համապատասխան վերլուծությունները (ցանցային զարգացման բազմամյա նախագծեր գազի և էլեկտրականության մասով)՝ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին, Խորհրդին և Տնտեսական ու սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեին ուղարկում և յուրաքանչյուր երկու տարին մեկ հրապարակում է Միության էներգետիկ համակարգի կառուցվածքային զարգացման և հեռանկարների միջճյուղային վերլուծություն: Այդ վերլուծության մեջ շեշտը պետք է դրվի, մասնավորապես.

ա) էներգիայի պահանջարկի ու մատակարարման միջև հետագա հնարավոր բացերի բացահայտման վրա, ինչը կարևոր է էներգետիկայի վերաբերյալ Միության քաղաքականության հեռանկարների տեսանկյունից.

բ) ներդրումների խոչընդոտների բացահայտման և այդ առումով լավագույն փորձին նպաստելու վրա. և

գ) շուկայի մասնակիցների և պոտենցիալ շուկա մուտք գործողների համար թափանցիկությունը մեծացնելու վրա: Այդ տվյալների ու տեղեկությունների հիման վրա Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, կարող է տրամադրել նաև հատուկ վերլուծության:

2. 1-ին պարբերությունում նշված վերլուծությունները նախապատրաստելիս Հանձնաժողովին կարող են օժանդակել անդամ պետությունների փորձագետներ և (կամ) տվյալ տարածքի՝ հատուկ իրավասություն ունեցող այլ փորձագետներ, մասնագիտական ասոցիացիաներ:

Հանձնաժողովը պետք է բոլոր անդամ պետություններին հնարավորություն տա դիտողություններ անել վերլուծությունների նախագծի վերաբերյալ:

3. Հանձնաժողովը վերլուծությունները քննարկում է շահագրգիռ կողմերի հետ, օր՝ էլեկտրականության փոխանցումների համակարգի օպերատորների եվրոպական ցանցի, Գազի փոխանցումների համակարգի օպերատորների եվրոպական ցանցի, Գազի համակարգման խմբի և Նավթի մատակարարման խմբի հետ:

Հոդված 11

Վերանայումը

«Մինչև 2015 թվականի հուլիսի 23-ը Հանձնաժողովը պետք է վերանայի սույն Կանոնակարգի կիրարկումը և վերանայման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնի Եվրոպական պառլամենտին և Խորհրդին»: Վերանայելիս Հանձնաժողովը պետք է, ի թիվս այլոց, ուսումնասիրի սույն Կանոնակարգի կիրառության ոլորտի հնարավոր ընդարձակումը գազի, նավթի և ածխի արդյունահանման ներառման նպատակով:

Հոդված 12

Ուժը կորցրած ճանաչելը

Թիվ 736/96 (ԵՀ) կանոնակարգը սույնով ճանաչվում է ուժը կորցրած:

Հոդված 13

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակումից հետո 20-րդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 2010 թվականի հունիսի 24-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Ջ. Բլանքո Լոպես

[1] ՊՏ L 281, 23.11.95 թ., էջ 31:

[2] ՊՏ L 8, 12.01.01 թ., էջ 1:

[3] ՊՏ L 326, 17.12.96 թ., էջ 13:

[4] ՊՏ L 102, 25.04.96 թ., էջ 1:

[5] ՊՏ թիվ L 211, 14.08.2009թ., էջ 15:

[6] ՊՏ թիվ L 211, 14.08.2009թ., էջ 36:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

1. ՆԱԿԹ

1.1. Մշակում

- տարեկան կտրվածքով առնվազն 1 մլն տոննա արտադրողականությամբ թորման սարքավորումներ,
- տարեկան կտրվածքով ավելի քան 1 մլն տոննա թորման հնարավորության ընդարձակում,
- օրական կտրվածքով առնվազն 500 տոննա արտադրողականությամբ նավթամշակման գործարանային կայանք,
- մնացորդային մագուիթի, գազայուղի, հումքի կամ այլ նավթամթերքի ծծմբազերծման կայաններ,

Չեն ընդգրկվում քիմիական կայանները, որոնք մագուիթ և (կամ) շարժիչային վառելիք չեն արտադրում կամ արտադրում են որպես ենթամթերք:

1.2. Փոխադրումները

- Տարեկան կտրվածքով առնվազն 3 մլն մետրիկ տոննա հզորությամբ՝ անմշակ յուղի խողովակաշարեր և դրանց լայնացում կամ երկարացում (առնվազն 30 կիլոմետրով),
- տարեկան կտրվածքով առնվազն 1.5 մլն մետրիկ տոննա հզորությամբ՝ նավթամթերքի խողովակաշարեր և դրանց լայնացում կամ երկարացում (առնվազն 30 կիլոմետրով),
- «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 171-րդ հոդվածով սահմանված ուղեցույցներում նշված պետական կամ միջպետական նշանակության ցանցերում առանցքային նշանակություն ունեցող խողովակաշարեր և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խողովակաշարեր ու նախագծեր:

Չեն ընդգրկվում ռազմական նպատակներով օգտագործվող խողովակաշարերն ու 1.1. կետի գործողության ոլորտից դուրս գտնվող կայաններում օգտագործվող խողովակաշարերը:

1.3. Պահեստավորում

- Անմշակ յուղի ու նավթամթերքի պահեստավորման համար նախատեսված պահեստարաններ (150000 կամ ավելի մ3 հզորությամբ սարքավորումներ, իսկ ցիստեռների դեպքում՝ առնվազն 100000 մ3 հզորությամբ),

Չեն ընդգրկվում ռազմական նպատակների համար նախատեսված ցիստեռներն ու 1.1. կետի գործողության ոլորտից դուրս գտնվող կայաններում օգտագործվող ցիստեռները:

2. ԳԱՁ

2.1. Փոխանցում

Գազի, այդ թվում՝ բնական գազի և բիոգազի փոխանցումը ցանցի միջոցով, որը հիմնականում պարունակում է բարձր ճնշման խողովակաշարեր, որոնք տարբերվում են գլխամասային կառույցների ցանցերից և բաշխիչ ցանցերից/բարձր ճնշման խողովակաշարերի այն մասից, որը հիմնականում օգտագործվում է բնական գազի տեղական բաշխման համար,

- ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խողովակաշարեր ու նախագծեր, որոնք նշված են ԵՄԳՊ 171-րդ հոդվածի համաձայն սահմանված ուղեցույցներում [2]:

2.2. ՀԲԳ բեռնափոխադրման կայաններ

- Տարեկան կտրվածքով 1 միլիարդ մ3 և ավելի վերագազաֆիկացման հնարավորություն ունեցող բեռնափոխադրման կայաններ/տերմինալներ, որոնք նախատեսված են հեղուկացված բնական գազի ներմուծման համար:

2.3. Պահեստավորում

- 2.1. կետում նշված փոխադրման խողովակաշարերի հետ կապված պահեստարաններ

Չեն ընդգրկվում գազի խողովակներ, ռազմական նպատակներով օգտագործվող տերմինալներ և կայաններ, ինչպես նաև քիմիական նյութեր մատակարարող կայաններ, որոնք էներգակիրներ չեն արտադրում կամ արտադրում են որպես ենթամթերք:

3. ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Արտադրական պրոցես

- Ջերմաէլեկտրակայաններ և ատոմակայաններ (100 կամ ավելի ՄՎտ հզորությամբ գեներատորներ),
- բիոզանգված, բիոհեղուկներ, թափոններից ստացվող էներգիայի արտադրության սարքավորումներ (20 կամ ավելի ՄՎտ հզորությամբ),
- համակցված արտադրությունից ստացվող էներգիայի և օգտակար ջերմության ստացման էլեկտրակայաններ (20 կամ ավելի ՄՎտ էլեկտրական հզորությամբ սարքավորումներ),
- հիդրոէլեկտրակայաններ (30 կամ ավելի ՄՎտ հզորությամբ կայաններ),
- 20 կամ ավելի ՄՎտ հզորությամբ հողմակայաններ,
- արևաջերմային ու կենսաջերմային սարքավորումներ (20 կամ ավելի ՄՎտ հզորությամբ),
- ֆոտոգալվանային սարքավորումներ (10 կամ ավելի ՄՎտ հզորությամբ):

3.2. Փոխանցումը

- էլեկտրահաղորդման օդային գծեր, եթե դրանք նախագծված են ազգային մակարդակով էլեկտրահաղորդման միջհամակարգային գծերում սովորաբար օգտագործվող լարման համար՝ պայմանով, որ դրանք նախագծված են 220 կամ ավելի կՎտ լարման համար,
- ստորգետնյա կամ ստորջրյա փոխանցման գծեր, եթե դրանք նախագծված են 150 կամ ավելի կՎտ լարման համար,
- ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նախագծեր, որոնք նշված են ԵՄԳՊ 171-րդ հոդվածի համաձայն սահմանված ուղեցույցներում [3]:

4. ԲԻՈՎԱՌԵԼԻՔ

4.1. Արտադրական պրոցես

- Կառուցվածքներ, որոնք բիովառելիք արտադրելու կամ մշակելու հնարավորություն ունեն (տարեկան 50000 կամ ավելի տոննա արտադրողանությամբ կառուցվածքներ):

5. ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱՋ

5.1. Փոխադրումները

- 1.1. և 3.1 կետերում նշված արտադրման կայանքների CO2-ի խողովակաշարեր:

5.2. Պահեստավորում

- Պահեստարաններ (100 kt կամ ավելի ծավալով պահեստավորման վայր կամ պահեստավորման համալիր),

Չեն ընդգրկվում գիտահետազոտության կամ տեխնիկական զարգացման համար նախատեսված պահեստարանները:

1] Անդրեվրոպական էներգացանցերի համար ուղեցույցներ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1364/2006/ԵՀ որոշումն (ՊՏ L 262, 22.09.2006թ., էջ 1) ընդունվեց Եվրոպական համայնքը հիմնադրող պայմանագրի 155-րդ հոդվածի համաձայն:

2] Թիվ 1364/2006/ԵՀ որոշումն ընդունվեց ԵՀ պայմանագրի 155-րդ հոդվածի համաձայն:

3] Թիվ 1364/2006/ԵՀ որոշումն ընդունվեց ԵՀ պայմանագրի 155-րդ հոդվածի համաձայն: